ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 37-Ա

«30» 01 2023 թ. ք. Երևան

Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 17-ի թիվ 3 որոշումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով և 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արդարադատության երկրորդ դասի խորհրդական Արմեն Ավետիքի Շահբազյանին նշանակել Լոռու մարզի դատախազի պաշտոնին՝ ազատելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնից:

2. Ա. Շահբազյանին հանել դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ